

СИГНАЛЬНЫЙ
ЭКВИВАЛЕНТ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԻՊԻ
ՋԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր Ը

A II
23667



«ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազան ու անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հարստության ու հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունևոր ու կուլտուրական կյանքի աղբյուր:

Հանրային, սոցիալիստական սեփականության դեմ վոտնձգություն անող անձիք ժողովրդի թշնամիներ են»:

(ԽՍՀՄ-ի Սահմանադրություն, հոդ. 131):

«Համ Կ(բ)Կ ԿԿ-ն կուսակցական և խորհրդային քոլոր կազմակերպություններից, ՄՏԿ-ների ու Խորհատեսությունների դիրեկտորներից և կոլտեսեսությունների վարչություններից պահանջում է բերքը հափշտակումից և հրդեհներից խստորեն պահպանել»:

Համ Կ(բ)Կ ԿԿ-ի Պլենումի 1935 թ. հունիսի 7-ին ընդունած բանաձևից՝ «Գյուղատնտեսական մթերքների (պրոդուկտների) բերքաճաճվածքի և մթերման մասին»:

Հաստատված են խՍՀ Միության
Հողագործության ժողովրդական
կոմիտեի կողմից 1939 թ.
14 ապրիլի

Համաձայնեցված են խՍՀՄ
ՆԳԾԿ ՀԳԴՎ-ի հետ 1939 թ.
մարտի 3 Ձ 1004987

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԻՊԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Այս կանոնները պարտավոր են կատարելու գյուղատնտեսական տիպի բոլոր ձեռնարկությունները՝ խորհրդային տնտեսությանը, մեքենա-տրակտորային կայանները, մեքենա-տրակտորային արհեստանոցները, սելեկցիոն կայանները, գյուղական վայրերում գտնվող գյուղատնտեսական հաստատությունները և այլ հիմնարկությունները, ձեռնարկություններն ու տնտեսությունները, վորոնք պատկանում են խՍՀՄ Հողագործության ժողովրդական կոմիտեի կողմից:

1. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Ձեռնարկության տերիտորիայի պլանավորումը կատարվում է գոյություն ունեցող կանոնների և նորմաների համեմատ:

2. Գյուղատնտեսական ձեռնարկությունների տերիտորիայի բոլոր անցարանները, ճանապարհները և կամուրջները, վորոնք նախատեսված են խմբերի և դուռժինաների համար, պետք է տարվա բոլոր յեղանակներին լինեն գյուղանցանելի և կանոնավոր վիճակում:

3. Հրդեհ ծագելու դեպքում ձեռնարկությունը պետք է ապահովված լինի ջրով: Բնական ջրաղբյուրների բացակայության, հեռավորության կամ անբավարար լինելու դեպքում պատրաստվում են ավազաններ, ջրհորներ, վերելքային կամ ստորերկրյա ջրափոսեր և այլն: Զրմուղներ կառուցելու դեպքում, վերջիններս պետք է հարմարեցնել հրդեհաշիջման նպատակներին կամ պետք է անմիջապես տարվեն ջրմուղային ցանցից կամ այդ ցանցն ողտադործեն ջրափոսերը լցնելու համար:

4. Զրաղբյուրներն ամբողջ տարին պետք է ապահովված լին-

նեն ճանապարհներով, իսկ նրանց մոտեցրում պետք է կառուցվեն հրդեհաշիջ նասոսները դնելու հարթակներ:

5. Ձմեռ ժամանակ, զետեղի ավազանների և լճերի վրա պետք է պատրաստել անցքեր, վորոնք պետք է պահպանվեն ողտագործման համար հարմար վիճակում և ցույց տրվեն ցուցիչներով՝ ձողերով, նշափայտերով և այլն:

6. Ձեռնարկության տերիտորիայի՝ սպասարկման համար հարմար տեղում պետք է կառուցել հրդեհաշիջ դեպո՝ դիտողական աշտարակով կամ սրահ: Դեպոյի կամ սրահի պատրաստությունը վորոշվում է ձեռնարկության մեծությամբ կամ արժեքով:

7. Հրդեհաշիջ դեպոյում պետք է շարունակ գործածման համար լիակատար սարքին և պատրաստի վիճակի մեջ լինեն հրդեհաշիջ ինվենտարն ու սարքավորումը: Դրանց քանակը վորոշվում է ձեռնարկության մեծության և արժեքի համեմատ:

8. Ձեռնարկության մեջ յեղած ամբողջ հրդեհաշիջ ինվենտարի և սարքավորման կանոնավոր վիճակին պատասխանատու չեն՝ ձեռնարկության պետը, կամավոր հրդեհաշիջ խմբի պետը կամ պրոֆեսիոնալ հրդեհաշիջ խմբի պետը:

9. Սրգելվում է հրդեհաշիջ ինվենտարն ու սարքավորումը իրենց ուղղակի նպատակին չծառայեցնել և զրա հանցավորները քրեյական պատասխանատվության են կանչվում (հոդ. USՈ 4. V. 1921 թ.):

10. Հրդեհաշիջ ինվենտարն ու սարքավորումը տեղ հասցնելու, տակառնելով ջուր կրելու և անհրաժեշտ դեպքում կապի համար ձեռնարկության մեջ ամեն որ (հրդեհաշիջ խմբում սեփական ձիեր չունենալու դեպքում) պետք է առանձնացնել հերթապահ ձիեր այն քանակով, ինչ վոր տեղական պայմանները պահանջում են:

Այս նպատակի համար կարելի չէ նույնպես տրամադրել աշխատանքներից ազատ ավտոմոբիլներ:

11. Հրդեհի մասին ազդանշան տալու համար ձեռնարկության տերիտորիայում պետք է լինեն ձայնական ազդանշանի հարմարանքներ (յերկաթատախտակներ, ուլխի կտորներ և այլն): Յանկալի չէ խոշոր ձեռնարկություններում ունենալ հատուկ հրդեհաշիջ սիգնալիզացիա:

12. Հրդեհաշիջ անհրաժեշտ միջոցները կիրառելու, հակահրդեհային վիճակին, հրդեհային անվտանգության սահմանված

կանոնները պահպանելուն հսկելու և ձեռնարկության մեջ ծագած հրդեհներին դեմ պայքարելու համար պետք է կազմակերպել գերատեսչական գործող դիրեկտիվների համեմատ գործող կամավոր կամ պրոֆեսիոնալ խումբ:

13. Կամավոր հրդեհաշեջ խմբի (կամ հրդեհաշեջ խմբի) պետք պետք է մշակի ձեռնարկության հակահրդեհային ռեժիմի հրահանգը: Այս հրահանգը հաստատում է դիրեկտորը, բոլոր բանվորներին, ծառայողներին ու ձեռնարկության տներում ապրող նրանց ընտանիքի անդամներին պետք է ծանոթացնել նրա բովանդակությանը: Նա յե կազմում նույնպես ձեռնարկության և նրա առանձին մասերի հրդեհաշեջ ուղերատիվ պլանը: Հրդեհաշիջմանն այս պլանով բոլոր մասնակցողներին պետք է նրան լավ ծանոթացնել: Այս պլանը նյութնպես հաստատում է դիրեկտորը:

14. Ձեռնարկության հակահրդեհային վիճակին, իր ժամանակին անհրաժեշտ հակահրդեհային միջոցներ կիրառելուն, ինչպես նաև կամավոր կամ պրոֆեսիոնալ հակահրդեհային խմբեր կազմակերպելուն և նրանց մարտունակությանը պատասխանատու յե ձեռնարկության դիրեկտորը (վարիչը, պետը, կառավարիչը)՝ գործող որենսդրության համաձայն:

15. Արտադրական շենքերի և պահեստների ներսից ու դրսից պետք է կախել ձեռքի քիմիական կրակմարիչներ: Մրանց պահանջը վորոշվում է այդ շենքերի յուրաքանչյուր 200 քառ. մետրը տարածությանը հաշվելով 1 հատ, սակայն յուրաքանչյուր առանձին շենքին 1 հատից վոչ պակաս: Կրակմարիչները կախվում են ձեռնարկության հրդեհաշեջ պահպանության դեկավարի վորոշած տեղերում: Պետք է բոլոր բանվորներին ու ծառայողներին սովորեցնել, թե ինչպես պետք է վարվել կրակմարիչների հետ:

Մանրաբայր. Կրակամարիչների պահպանության դեպքում նրանց փոխարինում են ջրով լցված դույլերով, հիդրոպուլտերով—ավազով լցված դույլերով կամ արկղներով և թաղիքի կտորներով (քեչաներով), վորտեղ չի կարելի կրակը ջրով հանգցնել:

16. Ձեռնարկության արտադրական տերիտորիայի յուրաքանչյուր շենքի մոտ ամառ ժամանակ, պետք է դնել 250—300 լիտր տարողությամբ ջրով լցված տակաոներ. յուրաքանչյուր տակաոնի մոտ պետք է լինի 1 դույլ:

17. Սրբեւանյուեթ գործածող բոլոր շենքերում գործածված լաբեղենի և շորակտորների համար պետք է դրվեն ամուր կերպով փակվող խոփերով մետաղի արկղներ կամ ներսից մետաղով պատած փայտե արկղներ:

18. Աշխատանքները վերջանալուց հետո այս արկղները պետք է ամեն ուր դատարկել և ոգտագործված լաբեղենն ու շորի կտորները վառել:

19. Ելեկտրականացման յենթարկված ձեռնարկությունների ամբողջ ելեկտրահաղորդումն ու ելեկտրասարքավորումը պետք է լիովին համապատասխանի գործող ելեկտրո-տեխնիկական նորմաներին և կանոններին:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հաղորդալարերի և հոսանքատար մասերի կանոնավոր մեկուսացման վրա: Բոլոր ապահովիչները պետք է համապատասխանեն հոսանքի հաշվային ուժին: Չի թույլատրվում նորմալ ապահովիչները փոխարինել մետաղալարով, մետաղաթիթեղով, մեխերով և այլն: Իբրև կանոն, չի թույլատրվում ամեն տեսակի «ժամանակավոր ապահովիչներ» և «սառը զոգ» կիրառել՝ հաղորդալարերի միակցման զեպքում:

20. Արտադրական բոլոր շենքերն ու պահեստները անպետք իրերից աղբից, արտադրական մնացորդներից, անպետք դատարկ տարաներից և այլն պետք է ազատ լինեն: Աղբի, արտադրական մնացորդների և դատարկ տարաները պահելու համար հատկացնել առանձին և հրդեհի տեսակետից անվտանգ տեղեր:

21. Չի թույլատրվում ծխել և բաց կրակ դործածել՝ դյուրբավառ հեղուկներ, վառուհակ նյութեր գործածելու և պահելու, գյուղատնտեսական պրոդուկտներ մշակելու տեղերում (խոտ, դարման, ծղոտ պահելու տեղերում, կալերում, հացահատիկի, կերի պահեստներում և այլն), անասունների և թռչունների շենքերում, ավտոմոբիլային և տրակտորային գարաժներում, կալատեղերում, ղեղերի, խոտ ու դարման կամ ծղոտ բարձած սայլերի մոտ, բնակելի և արտադրական շենքերի շերտակներում, հանրային հավաքավայրերում և թատրոնական շենքերում, ու տեղիադրայի այն բոլոր տեղերում ու ձեռնարկության շենքերում, վորտեղ ներքին կարգ ու կանոնի որենքներով այդ չի թույլատրվում:

22. Այն բոլոր տեղերում, ուր արգելված է ծխել և բաց կրակ գործածել, պետք է կախված լինեն ցուցանակ՝ «Ծխելն

արգելվում է», «բաց կրակով ոգտվել չի կարելի» պարզ մակագրություններ:

23. Ծխելու համար պետք է հատկացվեն հատուկ վայր վորտեղ պետք է լինի ջրով լիք տակառներ, ծխելու տեղերը պետք է ունենան «ծխելու տեղ» մակագրությունը:

24. Ծխեն արգելելու, կրակ անելու և ծխելու տեղը վորոշելու մակագրությունները պետք է կազմել ազգային լեզվով:

25. Բանվորներն ու ծառայողները և ձեռնարկության տերիտորիայի բնակելի շենքերում ապրող նրանց ընտանիքի անդամները պետք է իրենցից կախված բոլոր միջոցները ձեռք առնեն հրդեհից նախազգուշանալու և հրդեհային անվտանգության սահմանած կանոնները պահպանելու:

26. Այդ նպատակով նախորդ կետում հիշված կառուցումների բնակելի, ոժանդակ և բակի շենքերում արգելվում է՝

ա) չհրդակներում վառուճակ նյութեր, կահ-կարասիք և անպետք իրեր և այլն պահել:

բ) չհրդակներ բնակարանի և գիշերոթի համար հատկացնել և չհրդակներում վորևե աշխատանք կատարել:

գ) չհրդակների տանիքի տակ վառուճակ նյութեր (տորֆ, թեփ, փայտեղեն, տերև, ճյուղեր և այլն) լցնել՝ առանց նրանց առաստաղը կավով սվաղելու և առանց այդ նյութերի վրա կրաջուր կամ կավաջուր լցնելու և առանց նրանց վոչ վառուճակ նյութով (ծ սմ-ից վոչ պակաս հաստության ավազով, շլաքով և այլն) պատելու:

դ) ճանապարհները, անցարանները և շենքերի արանքները վառուճակ և խոշոր նյութեր (փայտեղեն, վառելավայր խոտ, դարման, ծղոտ և այլն) լցնել:

զ) տաք յեղանակներն սկսելիս շենքերի պատերը տաքացնող նյութեր (ծղոտ, փայտեղեն, ճյուղեր և այլն) թողնել:

է) վառարաններ դյուրավառ հեղուկներով (նավթով, բենզինով և այլն) վառել:

ը) տաք մոխիրը կամ ածուխը փայտե շենքերի և ցանկապատերի մոտ թափել: Վառարաններից հանվող ածուխը և մոխիրը պետք է լցնել հրակայուն նյութերից պատրաստված և ամուր կերպով փակվող հանգցնող ամանների մեջ և ապա թափել շենքերից և պահակատներից հեռու փորած հատուկ փոսերի մեջ ու վրան ջուր լցնել:

27. Վառարանների վառելու և վերջացնելու սեզոնից առաջ և վերջը վառարաններն ու ծխնելույզները պետք է ուշիուշով դնեն և հայտնաբերված բոլոր անկանոնություններն անմիջապես վերացնել:

Ծխնելույզների մուրը պետք է մաքրել, իրեն կանոն, վոչ պակաս քան 2 ամիսը մեկ անգամ, իսկ յերկար և ուժեղին վառվող ոչխառնեցող վառարանների (ճաշարանների, խոհանոցների, բաղնիքների և այլն) ծխնելույզները՝ վոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

28. Ելեկտրական լուսավորություն լինելու դեպքում արգելվում է՝

ա) ելեկտրական հաղորդալարերն ամրացնել մեխերով, հենակներով և այլ տեսակի մետաղե առարկաներով, նրանց անցկացնել դռների փեղկերի արանքներով, հաղորդալարերի և անջատիչների վրա վորեն լսան փուկ, հաղորդալարերի ծայրերը և միացման տեղերը մերկ թողնել չի թույլատրվում:

բ) ելեկտրական լամպերը թղթով և շորով փաթաթել:

գ) ապահովիչները մետաղալարից պատրաստած ապահովիչով փոխարինել:

դ) առանց վարչության թույլտվության ելեկտրաջնուցիչ գործիքներով ողտվել:

զ) առանց ձեռնարկություն վարչության գիտություն ելեկտրասարքավորման և ելեկտրահաղորդման վերանորոգում կատարել:

29. Նավթի լամպաներ (և մոմեր) գործածելիս պետք է պահպանել հետևյալ կանոնները:

ա) չողտվել այնպիսի լամպաներով, վորոնք ապակիներ չունեն և վորոնց վառիչները անկանոն վեճակում են:

բ) լամպաները վառվելու ժամանակ նրանց մեջ նավթ չլցնել:

գ) թույլատրվում է լամպաների մեջ նավթ լցնել ցերեկ ժամանակ:

դ) չերգակներում, խոտը լցնելու տեղերում, պահեստներում և այլն լուսավորության անհրաժեշտություն դեպքում ողտվել միմիայն ապակեպատ լապտերի մեջ դրված մոմերով:

զ) վառվող լամպաները կամ մոմերը չպետք է դյուրավառ նյութերի մոտ դնել:

30. Կրակ անել, աղբ, չորուկ, չոր խոտ և այլն վառել

թույլ եւ տրվում ձեռնարկութեան տեսակի շնքերից 100 մետրից վոչ պակաս հեռավորութեան վրա, քամի չեղած ժամանակ: Կրակը վառվելուց հետո մնացած մոխրի եւ ածուխի վրա պետք ե ջուր կամ հող լցնել:

31. Հանձնարարվում ե ամառ ժամանակ յուրաքանչյուր բնակելի տան մոտ ունենալ ջրով լցված տակառ, շվաբր ե դուլքեր:

II. ԿԱԼԵՐԻ, ԶՈՐԱՆՈՑՆԵՐԻ, ԽՐՁԱՆՈՑՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՅԱՀԱՏԻԿ-ՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ՇՐԳԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

32. Խրձանոցներում ե չորանոցներում չրվող վառարանները պետք ե այնպիսի կաղմութեան ունենան, վոր հնարավորութեան չտա այդ շնքերի մեջ կայծերը թռչելու: Զորանոցների ծխնելույզները պետք ե սպիտակացնել: Ծխադողովակները պետք ե տանիքների փայտե մասերից (ծպեղներից, ցանցապատից) հեռու լինեն վոչ պակաս քան 10 սմ.:

33. Զորանոցների տանիքներն անհրաժեշտ ե պատրաստել վոչ վառուճակ նյութերից (կղմինդրից, ետերնիտից, ծղոտախառն կամ դարմանախառն կավից ե այլն):

34. Զորանոցի վառարանը վառվելիս պետք ե անընդհատ նրա մոտ գտնվի վառարան վառողը:

35. Զորանոցի վառարանը վառելուց առաջ պետք ե նրան ուշի ուշով դնել, վառարանի պատերի վրայից աղբի մնացորդները, փոշին ե այլն մաքրել: Հայտնաբերված բոլոր թերութեանները վառելուց առաջ պետք ե շտկել: Պետք ե վառարանի ծխնելույզները ե շեղ անցքերը մրից մաքրել հաճախակի (սակայն վառարանից ողողվելու ընթացքում ամսական յերկու անգամից վոչ պակաս):

36. Կալերի, չորանոցների ե խրձանոցների աշխատանքների ընդմիջումներին պետք ե վառարանները, շեղանցքները ե ծխնելույզները լավ մաքրել, նորոգել ե մրից մաքրել:

37. Զորանոցի շնքում պետք ե դրվի ջրով լցված տակառ: Տակառի մոտ պետք ե լինի դուլք: Զորանոցից դուրս նույնպես չրվում են ջրով լցված 3-4 հատ (նայած չորանոցի մեծութեանը) տակառներ:

38. Չորանոցների մոտ կուտակված ծղոտը պետք է այնտեղից իր ժամանակին հեռացնել:

39. Հացահատիկներ պահելու հատուկ հարմարանքները և առանձին պահեստների տանիքի ծածկոց պետք է լինեն վռնառունակ նյութերից (կղմինդրից, ետերնիտից, դարմանախառն կավից պատրաստված ծածկ):

Ծմնորայրյուն. Այդ շենքերի վրա թույլ է տրվում վառուենակ նյութերից տանիք ունենալ միմիայն իբրև ժամանակավոր միջոց:

40. Արգելվում է հացահատիկների հետ միասին հրդեհի տեսակետից վնասվածոր նյութեր պահել:

41. Արգելվում է հացահատիկների պահեստներում բնակելի շենքեր կառուցել:

42. Հացահատիկների պահեստների արանքները պետք է պահել մաքուր և այնտեղ վորեք իր չլցնել:

43. Արգելվում է հացահատիկների պահեստների և հացահատիկների չորանոցների մոտ ծխել և բաց կրակ գործածել:

44. Արգելվում է հացահատիկների պահեստները վառարանով տաքացնել: Թույլ է տրվում վառարաններ դնել այն պահեստներում, վորտեղ պահվում են հատուկ կուլտուրաներ, վորոնք պահանջում են համապատասխան ջերմություն (կողբերի վրա պահվող սերմացու յիգիպտացորեն, սորգո ավելներ և այլն):

45. Հացահատիկների պահեստների համար մշտական լուսավորություն ունենալու անհրաժեշտության դեպքում այդպիսին պետք է լինի ելեկտրական, վորը պատրաստվում է արտաքին ելեկտրահաղորդման և արմատուրայի անցկացման կանոնների հիման վրա: Մասնավորապես՝

ա) ելեկտրահաղորդիչները պետք է անցկացնել մեկուսիչներ ունեցող կեռերի (խարխիլների) վրայով:

բ) լամպաները պետք է ունենան կիսահերմետիկ փափուկաշերտեր և անջատիչներ:

գ) անջատիչներն ու ապահովիչները պետք է դրվեն դռի կողմից:

46. Այն կետերում, վորտեղ ելեկտրական լուսավորություն չկա, թույլ է տրվում վորպես բացառություն, հացահատիկների պահեստները լուսավորել «Չղջիկ» լամպերներով: Արգելվում է մշտական լուսավորության համար հացահատիկների պահեստ-

հերոսւմ ոգտւել նաւթի լամպաներով, մոմերով և այլն:

47. Հացահատիկների պահեստները տանող դռները պետք է բացվեն դեպի դուրս և իրերով բռնված չլինեն:

48. Տարվա տաք յեղանակին հացահատիկների պահեստներին մոտ պետք է դրվեն ջրով լցված տակառներ կամ կիսատակառներ՝ յուրաքանչյուր պահեստին չորս հատ: Յուրաքանչյուր տակառի մոտ պետք է լինի մեկ դուռ:

49. Հացահատիկների բոլոր պահեստները պետք է փոշուց պարբերաբար մաքրել:

50. Հացահատիկների պահեստների մոտ պետք է դրված լինեն սիգնալիզացիայի պրիբոր — պրիմիտիվ (յեթակթի կտոր, ռելս զանգեր և այլն):

III. ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՇՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

51. Անասնաբակի յուրաքանչյուր առանձին շենքի համար պետք է կազմված լինի հրահանգ, ամբողջ սպասարկող անձնակազմի համար, հրդեհ ծագելու դեպքում անասուններին դուրս հանելու համար:

Հերթապահ սպասարկող անձնակազմի միջև պետք է ճշտորեն բաշխված լինեն դուրս հանելու պատրաստականությունները:

Անասունների դուրս հանման հրահանգն ու անձնակազմի պարտականությունների բաշխումը պետք է կախված լինեն շենքի աչքի ընկնող տեղում և ամբողջ սպասարկող կազմին պետք է նրա հետ լավ ծանոթացներ:

52. Անասունների շենքերի բոլոր դարպասներն ու դռները պետք է բացվեն դեպի դուրս և վոչ մի բանով խափանված չլինեն: Զի թույլատրվում այդ շենքերին շեմքեր, աստիճանների, յենթադռներ պատրաստել, ինչպես նաև նրանց ավտոմատ կերպով փակելու համար զսպանակներ և ճախարակները շինել: ցերեկային գոմերը թույլ է տրվում փակել միմեայն հեշտ բացվող սողնակներով կամ փակիչներով: Զի թույլատրվում նրանց վրա կողպեք դնել:

53. Զի թույլատրվում անասնաբակների շենքերում վորեև առարկա, նյութ և կեր դնել, վորոնք կարող են անասունների

դուրս հանման ժամանակ նրանց շարժմանն արգելք հանդի-
սանալ:

54. Անասնաբուժական շենքերում և նրանց կերի պատ-
րաստման բաժանմունքներում մշտական վառարաններ դնելու
համար ղեկավարվել այդ առթիվ ունեցած հատուկ կանոններով:

55. Արգելվում է անասնաբուժական շենքերում ժամանա-
կավոր վառարաններ դնել:

56. Զի թույլատրվում գոմերում անասուններին մեկ ան-
գամ կերակրելու նորմայից ավելի կեր պահելու, բայց թույլա-
տրվում է պահել միայն գոմին կից հատուկ շենքում:

Զի թույլատրվում, վորպես կանոն, չերազկներում կեր պահել:

Մանրություն.— Այն դեպքերում, յերբ տնտեսական և
շահագործական նկատառումներով անհրաժեշտ է անասնա-
կեր պահել գոմերի չերազկներում, այդպիսի դեպքում
թույլատրվում է հետևյալ կանոնները կիրառել.

ա) հրակայուն կամ կիսահրակայուն ծածկ պատրաստելու
դեպքում.

բ) չերազկում ծխնելու լղհներ և ելեկտրահաղորդիչներ չլինե-
լու դեպքում.

գ) ամբողջովին տախտակներով առաստաղ պատրաստելու
դեպքում, վորի վրա ճեղքեր և անցքեր չլինեն և վորը
սվաղված լինի կավով 2 սմից վոչ պակաս հաստությամբ
ցեխով կամ կրակից պաշտպանող համարժեք վորևե նյու-
թով.

դ) կեր իջեցնելու և կուտակելու անցքերի վրա ամուր
խոփեր դնելու դեպքում:

57. Այն անասնաշենքերում, վորտեղ ելեկտրական լուսա-
վորություն չկա, թույլ է տրվում «Ձղջիկ» լապտեր գործածել:
Լապտերները պետք է ամրացնել սյուների և պատերի վրա այն-
պիսի բարձրությամբ, վոր կենդանիները չհասնեն:

Լապտերների մոտի սյուներն ու պատերը պետք է տաքա-
նալուց պաշտպանված լինեն մետաղե վահանով:

Զի թույլատրվում լապտերները դնել բալրիքների, միջնորմ-
ների, մուրներ, հատակի վրա և այլն, վորտեղ նրանք կարող
են հեշտությամբ շուռ դալ:

58. Կենդանիների շենքերը և նրանց դիմացի բակերը կամ
հրապարակները պետք է պարբերաբար ծղոտից, գոմաղբից և

աղբից մաքրել և մշտապես մաքուր վիճակում պահել: Ձմռանը դարպասների և դռների առջևի բոլոր բակեր-հրապարակները պետք է ձյունից մաքրել, վորպեսզի նրանք ազատ կերպով բացվեն:

59. Ձի թուլատրվում անասունների և անասնակերի շենքերում ծխել, բաց կրակով ոգտվել, լապտերների մեջ վառելանույթ լցնել և դյուրավառ հեղուկներ պահել:

60. Բոլոր անասնաշենքերը հրդեհի համար պետք է ապահովված լինեն 250—300 լիտր տարող ջրով լցված տակառներով, վորոնք պետք է տեղավորված լինեն միմյանցից 25-30 մետր հեռավորության վրա: Յուրաքանչյուր տակառի մոտ պետք է լինի մեկ դույլ: Ձմեռ ժամանակ պետք է տակառները դնել շենքերի ներսը: Ձի թուլատրվում այդ տակառների ջրից և նրանց մոտի դուլներով ոգտվել անասուններ ջրելու և այլ տնտեսական կարիքների համար:

61. Ձի թուլատրվում անասնաշենքերում վորևն արհեստանոց կառուցել:

IV. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԴՅՈՒՐԱՎԱՌՅԵՎ ՎԱՌՈՒՆԱԿ ՇԵՂՈՒԿՆԵՐԸ (ՆԱՎԹԸ, ԼԵԳՐՈՒՆԸ, ԲԵՆՁԻՆԸ) ՅԵՎ ՅՈՒՂԵՐԸ ՊԱՀԵԼԻՄ, ԲԱԺԱՆԵԼԻՍ ՅԵՎ ՏԵՂԱՓՈԽԵԼԻՍ

62. Ձի թուլատրվում արտադրական, պահեստի և բնակելի շենքերից 50 մետր հեռավորությունից ավելի մոտիկ տարածության վրա մինչև 10 տոնն տարողությամբ պահեստներ կառուցել դյուրավառ հեղուկների ու յուղերի համար: Ավելի մեծ տարողությամբ պահեստները կառուցվում են հատուկ կանոնների պահպանությամբ:

63. Յուրաքանչյուր այդպիսի պահեստը պետք է պարսպապատել և նրա ամբողջ տերիտորիան մաքրել չոր խոտից, մացառներից, աղբից և այլն:

64. Ավտոմոբիլների և արակտորների մեջ պետք է վառելանույթ լցնել պահեստից 10 մետրից վոչ մոտիկ տարածության վրա: Պատահաբար դեռնին թափված վառելանույթի վրա պետք է ուշիուշով ավազ կամ հող լցնել:

65. Վառելանույթից դատարկված տակառները պետք է

դնել պահեստից վոչ պակաս քան 20 մետր հեռավորության վրա, դարսել ու լավ ծածկել:

66. Զի թույլատրվում վառելանյութի պահեստներում ծխել և բաց կրակ գործածել: Թույլ է տրվում պահեստները լուսավորել միմիայն էլեկտրականությամբ: Զի թույլատրվում գիշեր ժամանակ նրա բացակայության դեպքում վառելանյութ բաց թողնել:

67. Զի թույլատրվում վառելանյութի պահպանման համար հատկացված փակ շենքերում «Չղջիկ» լապտերների գործածել: Միանգամայն արգելվում է բաց ողում այդ լապտերներով ողտվել՝ վառելանյութի ցրտտերներ և տակառների մեջը լուսավորելու համար, նրանց մոտեցնել բենզինի բակերի անցքերին, վառելանյութը տեղափոխելու դույլերին ու բխոցներին և այլն, ինչպես նաև չի թույլատրվում նրանց մոտեցնել 10 մետրից ավելի մոտիկ դռնվող վառելանյութի ամեն տեսակի պահեստներին:

68. Թույլ է տրվում միմիայն յուղերով ու նավթով լցված տակառները յերկու շարք դնել: Զի կարելի բենզինով ու լիգրոինով լցված տակառները այդ ձևով դնել: Բոլոր տակառները պետք է դնել խցանները վերև դարձրած:

69. Տակառները պետք է բացել հատուկ բացիչներով: Զի թույլատրվում տակառները բացելիս կտրիչ, մուրճ և նման գործիքներ կիրառել:

70. Գերադասելի չէ ավտոտրանսպորտով վառելանյութ (տարայով) տեղափոխելիս, նրան տեղափոխել ավտոցիստերներով, կոնտեյներներով, կցաքարշերով կամ թե դրա համար առանձնապես հատկացրած ավտոմոբիլով:

Հեղուկ վառելանյութերի տեղափոխության համար հատկացված ավտոմոբիլներում շոֆերական կաբինների հետևի պատերը պետք է պատած լինեն յերկաթով: Խլացուցիչը պետք է դուրս բերել առաջ ռադիատորի տակ: Ըստ վորում պետք է հաշվի առնել հետևյալը. արտախփիչ խողովակը պետք է շուռ դա այնպես, վոր նրա և շարժիչին վառելանյութ մատակարարող որդանների միջև բավականաչափ տարածություն մնա ողափոխիչից ազատ կերպով ող անցնելու համար:

Խլացուցիչը պետք է դրվի լոնժերոնայի արանքը ռադիատորի տակ և պոչի խողովակը շուռ տված լինի այնպես, վոր խլացուցիչից դուրս յեկող արտախփիչ գազերը հողի նկատմամբ կազմեն 45°-ի անկյան ուղղություն:

Տեղափոխության համար չպետք է ծակ կաթացող տակառներ դործածել և նրանք պետք է դրվեն խցանները վերև դարձրած:

Տակառների տակ պետք է դնել պատվանդաններ, իսկ իրենք տակառները պետք է լավ ամրացնել մեքենայի վրա:

Դաշտային աշխատանքների տեղը բերվող վառելանյութով լցված տակառները պետք է պարունակեն իրենց տարողության 95 տոկոսից վոչ ավելի վառելանյութ:

Ամառ ժամանակ փոխադրվող տակառները պետք է ծածկվեն քրեղենտով, մեշկի կամ ռադոթի կտորով, և պետք է խնամ կերպով հսկել, վոր տակառները ծակ չլինեն և կաթոց չուռնան:

71. Վառելանյութի պահեստները պետք է ունենան խտափրփուր կրակամարիչներ, բահեր, և չոր ավաղի պաշար՝ հրդեհները հանգցնելու համար:

Ձեռնարկության մեջ փրփրամղիչներ և փրփրագնեքատորներ լինելու դեպքում հանձնարարվում է փրփրամղիչները պահել վառելանյութերի պահեստին մոտիկ, իսկ փրփրագնեքատորներին համար նույն տեղում, կենտրոնացնելով փրփուր առաջացնող փոշանյութ:

72. Մշտական հսկողության համար վառելանյութի պահեստներում պետք է կարգել որ ու գիշերային պահպանություն:

Պահակների բուզկաներ պետք է կառուցել պահեստի դարպասի մոտ պահեստներից կամ բաց կերպով դրված ցիստերներից, տակառներից 20 մետրից վոչ պակաս հեռավորության վրա:

73. Վառելանյութի յուրաքանչյուր պահեստ պետք է սարքավորված լինի հրդեհաշիջողություն կանչելու ոգդարարական գործիքներով (յերկաթի կտորներով, զանգերով, ռևսով և այլն):

74. Դաշտային պայմաններում վառելանյութը պետք է դնել չոր խոտից, մացառներից, վառուռակ աղբից և այլ մաքրված հարթակներում՝ կալատեղերից, ղեղերից, բարդերից վոչ պակաս քան 100 մետր, և ամեն տեսակի շենքերից (վոչ հրակայուն) ու կառուցվածքներից վոչ պակաս քան 50 մետր հեռավորության վրա:

Այդ հրապարակներում պետք է ունենալ ավաղի պաշար,

բահեր, և ըստ հնարավորին կրակամարիչներ՝ վառելանյութը բացավառվելու դեպքում հանդցնելու համար:

75. Դաշտում գտնվող վառելանյութով լցված տակառները պետք է պարունակեն իրենց տարողության 95⁰/₁₀-ից վոչ ավելի վառելանյութ, դրված լինեն խցանները դեպի վեր դարձրած և արևից պաշտպանված լինեն, վորի համար նրանք պետք է դրված լինեն քրեզենտից կամ հյուսած վահաններից պատրաստած ժամանակավոր թեթև ծածկերի տակ: Դատարկ տակառները պետք է տարվին վառելանյութի պահպանության տեղից վոչ պակաս քան 20 մ. հեռավորության վրա: Թե՛ լիքը և թե՛ դատարկ տակառները պետք է մշտապես փակված լինեն խցաններով: Արգելվում է մետաղե տակառների անցքերը փակել փայտե խցաններով և շորով, այլ դրա համար պետք է գործածել մետաղե ակոսավոր խցաններ:

76. Արգելվում է դաշտում վառելանյութով լցված տակառներին մոտիկ (ինչպես և այդ տակառները ձիու կամ մեքենական քարշի ոգնությամբ վոխադրելիս) ծխել և բաց կրակ գործածել:

77. Դաշտում գտնվող վառելանյութը պետք է մշտապես գտնվի մի վորոշ անձնավորության հսկողության տակ:

V. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

78. Ձի թույլատրվում հացահատիկների բերքահավաքի ժամանակ ցանքային տարածություններից 200 մետրից ավելի մոտիկ կրակ անել և չոր խոտ ու մնացորդներ վառել:

79. Ձի թույլատրվում, իբրև կանոն, խողանները վառել: Վորպես գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու միջոց, նրան վառելու անհրաժեշտության դեպքում, այդ աշխատանքը կարելի չե կատարել վոչ քամի յեղանակին, բալականաչափ մարդիկ և հրդեհաշիջման միջոցներ լինելու դեպքում:

80. Տրակտորները, կոմբայները և ավտոմեքենաները կարելի չե բերքահավաքի աշխատանքի ժամանակ գործածել միայն նրանց վառելու սարքավորում և կարբյուրացիան մանրադին կարգավորելուց հետո այն հաշվով, վոր խլացուցիչում կրակոցներ չլինեն և նրանցից ծուխ ու կաշիք դուրս չգան:

Բերքահավաքի աշխատանքի ժամանակ չի թույլատրվում

ախպիսի շարժիչներ գործածել, վորոնց բակերի խողովակներից վառելանյութ և յուղ և կաթում:

Այն կոմբայնների մոտորները, վորոնց կարբյուրատորները դրված են մաքնետոյի վրա, վերջիններս պետք և պաշտպանված լինեն, վոր նրանց մեջ վառելանյութ չլցվի:

81. Ավտոմոբիլների, տրակտորների և կոմբայնների վրայի ամբողջ ելեկտրալարերը պետք և լավ ամրացված և մեկուսացված լինեն: Մոտորները պետք և պահվեն մաքուր վիճակում և աշխատանքի ժամանակ կապոտներով ծածկված լինեն:

82. Տրակտորների, ավտոմեքենաների և կոմբայնների մոտորների արտախփիչ խողովակները պետք և ունենան կայծածարիչներ:

83. Վորպեսզի ծղոտները և հացահատիկները ավտոմեքենաների և տրակտորներին շիկացած արտախփիչ խողովակներից և խլացուցիչներից չբոցավառվեն, դրանք պետք և պաշտպանված լինեն յերկաթե պատյանով, վորը ունի աղբեստաթիթեղից պատրաստած միջադիր և յերկաթալարով լավ ամրացված և:

84. Վորպեսզի տրակտորներից, ավտոմեքենաներից և կոմբայններից վառվող մրի մասնիկները չթափվեն, պետք և արտախփիչ խողովակները, խլացուցիչները և կայծածարիչները ալրուքից լավ մաքրել:

Ծանոթություն.— Յուրաքանչյուր աշխատող կոմբայնի և ավտոմոբիլի վրա պետք և դրված լինի մեկական կրակմարիչ, իսկ յուրաքանչյուր կոմբայն, բացի դրանից, պետք և ունենա յերկաթյա բահ:

85. Տրակտորիստներին, ղեկերներին, մեքենավարներին, և կոմբայնավարներին նախքան աշխատանքները սկսելը, ձեռնարկության հրդեհաշիջ պահպանության պետը (կշիռի պետը) պետք և հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու վերաբերյալ նրանց հրահանգներ տա:

86. Ձեռնարկությանը պատկանող ցանքերի պահպանությունը հսկելու համար առաջադրվում են դիտակալներ, վորոնց վրա պարտականություն և դրվում սխտեմատիկ կերպով շրջելու (շրջանցելու) ցանքային տարածությունները, իսկ դիտողական աշտարակներ լինելու դեպքում նրանց վրա հերթապահություն անելու: Դիտակալներ պետք և նշանակվեն գլխավորապես կամավոր հրդեհաշիջ խմբերի անդամները:

87. Դիտողական աշտարակները պետք և սարքավորված

լինեն հրդեհների վերաբերյալ հաղորդել միջոցներով (մետաղե տախտակներով, շահկներով և այլն):

88. Կալատեղերը պետք է կառուցված լինեն ամեն տեսակի շենքերից, պահեստարաններից, փշատերև անտառներից պահեստից այլն վոչ պակաս քան 150 մետր հեռավորությա վրա: Ցանկալի յե դրանք կառուցել ջրաղբյուրների մոտ: Յերթևեկության հանապարհներից մինչև կալատեղերը յեղած հեռավորությունը 20 մետրից պակաս չպետք է լինի:

89. Կալատեղը պետք է շրջապատված լինի վարված շերտով, վորի լայնությունը պետք է լինի վոչ պակաս քան 3 մետր: Կալատեղը պետք է բուսականությունից և խոտից մաքրել:

90. Չի թույլատրվում կալատեղում աշխատող մեքենաները (լոկոմոբիլները, տրակտորները, ավտոմոբիլները և այլն) թողնել առանց հսկողության: Աշխատանքի ընդհատումների ժամանակ հերթապահները պետք է մնան կալում՝ հսկելու համար:

91. Չի թույլատրվում կալում ավտոմոբիլների և տրակտորների (այն տրակտորների, վորոնք ստացիոնար կերպով չեն տրվում) մեջ վառելանյութ լցնել:

92. Չի թույլատրվում աշխատանքների տերիտորիայում անչափահաս յերեխաներին առանց հսկողության թողնել:

93. Կատեգորիկ կերպով արգելվում է աշխատանքների տեղում ծխել, կրակ անել, լուցկի վառել, շարժիչների և մեխանիզմների վերաբերյալ այնպիսի նորոգիչ աշխատանքներ կատարել, վորոնց համար բաց կրակ է գործածվում: Նույնպես արգելվում է մեքենավարների բուռեկաներում ծխել: Ծխելու համար պետք է հատկացվեն կալատեղի վարելաշերտից 30 մետրից վոչ մոտիկ յեղած հատուկ տեղեր՝ հողի վերին շերտից մաքրված հրապարակում (պետք է ամբողջ բուսականությունն ու խոտը մաքրված լինի): Ծխելու տեղերը պետք է ունենան ջրով լցված տակառներ՝ ծխախոտի ավելցուկների համար և «ծխելատեղ» մակագրություն:

94. Ստացիոնար կերպով դրված ամեն տեսակի շարժիչների շահագործման ժամանակ, վորոնք ծառայում են կալիչներն ու կալի այլ տեսակի մեքենաները բանեցնելու համար, պետք է պահպանվեն հետևյալ կանոնները.

ա) Լոկոմոբիլը դնելու տեղը ծղոտներից, չոր խոտից, մուխախոտից և այլն պետք է մաքրված լինի: Լոկոմոբիլները ոջախ-

ները քամու կողմից պետք է վահաններով պաշտպանված լինեն:

բ) Լոկոմոբիլների խողովակները պետք է ունենան կայծ-վորսիչ ցանցեր, վորոնց աչքերը 5 մմ-ից ավելի խոշոր չլինեն:

գ) Լոկոմոբիլները վառելու համար ծղոտ և տորֆ պետք է մատակարարել կարիքի չափով: Ձի թուլատրվում ոջախների մոտ ծղոտի պաշար կուտակել: Ցակառների մոտ, վորոնք լոկոմո-բիլներին ջուր են մատակարում, պետք է ունենալ դուշ և հրանց-քից թափված մոխիրն ու կայծերը հանգցնելու համար՝ շվա-բրներ:

դ) Տրակտորների արտախփիչ խողովակները պետք է դար-ձած լինեն դեղերի հակառակ կողմը: Այս խողովակներին պետք է լրացուցիչ յերկաթե խողովակներ հագցնել, վորոնք հատուկ թեքվածություն ունեն և մոցվում են ջրով լցված տակառի մեջ. գազերի դուրս գալու համար այս տակառները ունեն յերկաթե խողովակներ, վորոնց տրամագիծը արտախփիչ խողովակների տրամագծից ավելի լայն է (10 սմ-ից վոչ պակաս): Յերկու խո-ղովակները տակառից մեկուսացված են հրակայուն նյութերով:

զ) Ստացիոնար կերպով դրված տրակտորների մեջ վառե-լանյութ պետք է լցնել մոտորը չաշխատած ժամանակ, կապոք փակած և ծալրի գործածելով: Տրակտորներին վառելանյութ է մատակարարվում միմիայն մետաղի փակ բիտոններով: Ձի թուլ-լատրվում, իբրև կանոն, գիշեր ժամանակ շարժիչների մեջ վա-ռելանյութ լցնել: Բացառիկ դեպքերում այդ կարելի յե անել տրակտորային լապտերների (այլ տրակտորի) լույսի կոմ ելեկ-տրական լապտերների լույսի տակ:

95. **Տրակտորներով աշխատող յուրաքանչյուր կալսիչ պետք է հրանց միացած լինի շղթայով կամ տրուսով, վորպեսզի ծղո-տի բոցավառման դեպքում կալսիչը անվտանգ տեղ տարվի:** Լո-կոմոբիլներով աշխատող կալսիչներ և հենց լոկոմոբիլների մոտ այդ նպատակի համար պետք է լինեն տրուսներ կամ շղթաներ:

96. Կալսիչ ագրեգատների միմյանց շփվող մասերը պետք է պարբերաբար յուղել համաձայն նրանց տեխնիկական շահա-գործման համար գոյություն ունեցող որենքների:

97. Ելեկտրոններգիայի ոգնությամբ կալսելիս պետք է պահպանվեն ելեկտրահանությամբ գործող ագրեգատների շահա-գործման բոլոր կանոնները. մասնավորապես՝

ա) պետք է բոլոր հոսանքատար մասերը և հաղորդալարերը հուսալի կերպով մեկուսացած լինեն:

բ) ելեկտրասարքավորման կայծատու բոլոր մասերը պետք է համապատասխան կերպով պաշտպանված լինեն աշխատ, վոր նրանց մեջ փոշի, ծղոտ և այլ բաներ չթափվեն:

գ) ամբողջ ելեկտրասարքավորումը պետք է ունենա նորմալ ապահովիչներ:

98. Կալսելու տեղերի ծածկերը պետք է պատել վոչ վառունակ նյութերով (կղմինդրով, ետերնիտով, դարմանախառն ցեխով և այլն):

99. Տրակտորները ծածկված կալատեղերում տեղավորելիս նրանց պետք է դնել վոչ վառունակ նյութերից (աղյուսից, ցեխով պատած ցանկապատից, սվաղած փայտից և այլն) պատրաստած միջնորմների հետևեր:

100. Թույլ է տրվում ծածկված կալատեղերում ունենալ մեկ որվա պաշարից վոչ ավելի չկախված հաց:

101. Չկախված հացի դեղերը պետք է դրվեն շենքերից և կառուցվածքներից 200 մետրից վոչ մոտիկ տարածության վրա: Նրանք պետք է ունենան 15-20 մետրից վոչ ավելի յերկարություն, 5 մետրից վոչ ավելի լայնություն և 4 մետրից վոչ ավելի բարձրություն: Դեղերից պետք է կազմել խմբեր՝ յուրաքանչյուր խմբում յերկուական դեղ, թողնելով խմբերի միջև վոչ պակաս քան 100 մետր հեռավորություն, իսկ առանձին դեղերի միջև 20 մետր հեռավորություն:

102. Կալսելուց հետո մնացած ծղոտը պետք է կիտել կալսելու տեղից վոչ պակաս քան 100 մետր հեռավորության վրա, իսկ չկախված ցորենից 200 մետր հեռավորության վրա:

103. Կալսիչներն անմիջապես դեղերին մոտեցնելիս վերջիններս դրվում են միմյանցից 8 մետրից վոչ պակաս հեռավորության վրա: Զույգ դեղերի արանքի տարածությունը այս դեպքում ևս 100 մետրից պակաս չպետք է լինի:

104. Կալսելու տեղերում պետք է կենտրոնացնել հրդեհաշիջ սարքավորումը (հրդեհաշիջ նաստաները, ջրով լցված տակառները, կրակամարիչները) և այլն այն քանակով, վորը վորոշում է ձեռնարկության վարչությունը, և պետք է ունեալ հրդեհաշիջ ոգնություն կանչելու ազդարարական հարմարանքներ (ռեւաներ, յերկաթե տախտակներ և այլն):

105. Կախման տեղերը թույլ է տրվում լուսավորել վոչ

պակաս քան 2 մետր բարձրութեամբ և մշակվող դառնալիտ
նյութերից վոչ պակաս քան 5 մետր հեռավորութեան վրա տրնկ-
ված սյուներին ամրացված «Ձղջիկ» լապտերներով:

106. Խոհանոցների, յեռամանների և կերակուր յեփելու
ոջախների, դաշտային դադդյաններ պատրաստելու տեղերը պետք
է լինեն կալսելու տեղերից 100 մետրից վոչ մոտիկ տարածու-
թեան վրա և դեղերից ու ծղոտի բարդերից 200 մետրից վոչ
մոտիկ տարածութեան վրա: Խոհանոցների, յեռամանների և
ոջախների շուրջը պետք է վարել:

Ծանոթութեամբ. Ձի թուլատրվում տորֆային բաց
գետնի վրա դաշտային դադդյաններ պատրաստել:

107. Տրակտորայուների ժամանակավոր (դաշտային) կա-
յանները պետք է դասավորել բոլոր տեսակի շենքերից, կալատե-
ղերից, դեղերից, բարդերից և այլն վոչ պակաս քան 100 մետր
հեռավորութեամբ՝ ծղոտից և ցախից մաքրված գետնի վրա:

108. Ձի թուլատրվում դաշտային կայաններում տրակտոր-
ների մեջ վառելանյութ լցնել, յերբ նրանց մոտորներն աշխա-
տում են, ծխել և բաց կրակ գործածել:

ԽՍՀՄ-ի Հողօգտագրման հրեւջ պահպանութեան
ինսպեկցիայի պես (Դեղով)



Պատ. խմբագիր Գ. Մանուկյան
Թարգմանիչ՝ Գ. Վասիկյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան

Գլավիտի լիազոր՝ Բ—1170, Պատվեր № 420, Տիրաժ 3000

Պետնամարտարանի Հրատարակչության տպարան, Յերևան, Արույան 104

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003206

[064.]

1402
A $\frac{\text{II}}{23667}$

19280

1208